«ԼՂՀ (ԱՐՑԱԽԻ) 25-ԱՄՅԱ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՁԵՌՔԲԵՐՈՒՄՆԵՐՆ ՈՒ ԱՐԴԻ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ»

միջազգային երիտասարդական գիտաժողով
15-18 սեպտեմբերի 2016թ.
Արցախ (ԼՂՀ), ք.Ստեփանակերտ

ՆՅՈՒԹԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

«25-ЛЕТИЕ ГОСУДАРСТВЕННОСТИ НКР (АРЦАХА): ДОСТИЖЕНИЯ И СОВРЕМЕННЫЕ ВЫЗОВЫ»

международная молодёжная конференция
15-18 сентября 2016г.
Арцах (НКР), г.Степанакерт

СБОРНИК МАТЕРИАЛОВ

ԱԵԳՄՄ-ОМУСА
ԵՐԵՎԱՆ-ЕРЕВАН
2016

Հրատարակության է երաշխավորվել Ստեփանակերտի Մեսրոպ Մաշտոց համալսարանի Գիտական խորհրդի որոշմամբ
Рекомендовано к публикации решением Ученого совета Университета Месроп Маштоц г.Степанакерта

ՀՏԴ 94(479.25):32.001:342:06
ԳՄԴ 63.3 (5Հ)+66.0+67.400
L 657

Խմբագրական խորհուրդ
ի.գ.դ., պրոֆ., ՀՀ ԳԱԱ ակադ. **Գ.Ս.Ղազինյան** (նախագահ), փ.գ.դ., պրոֆ., ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ **Ա.Ս.Մանասյան**, ի.գ.դ., պրոֆ. **Հ.Մ.Ավանեսյան**, պ.գ.դ., պրոֆ. **Վ.Ռ.Բալայան**, ի.գ.դ. **Վ.Վ.Գրուզդև**, ի.գ.դ., պրոֆ. **Ա.Հ.Խաչատրյան**, ք.գ.դ., պրոֆ. **Մ.Մ.Մարգարյան**, ք.գ.դ. **Ս.Մ.Մինասյան**, տ.գ.դ., պրոֆ. **Հ.Լ.Սարգսյան**, պ.գ.թ., դոց. **Ն.Է.Բաղդասարյան**, ք.գ.թ., դոց. **Խ.Ս.Գալստյան**, տ.գ.թ., դոց. **Ե.Ռ.Հայրիյան**, ի.գ.թ. **Ա.Հ.Հարությունյան**, ի.գ.թ., դոց. **Ա.Ա.Մանասյան**, ի.գ.թ., դոց. **Ս.Գ.Պետիկյան**

Редакционная коллегия
д.ю.н., проф., акад. НАН РА **Г.С.Казинян** (председатель), д.ф.н., проф., член кор. НАН РА **А.С.Манасян**, д.п.н., проф. **Г.М.Аванесян**, д.и.н., проф. **В.Р.Балаян**, д.ю.н. **В.В.Груздев**, д.ю.н., проф. **А.Г.Хачатрян**, д.п.н., проф. **М.М.Маргарян**, д.п.н. **С.М.Минасян**, д.э.н., проф. **Г.Л.Саргсян**, к.и.н., доц. **Н.Э.Багдасарян**, к.п.н., доц. **Х.С.Галстян**, к.э.н., доц. **Е.Р.Айриян**, к.ю.н. **А.Г.Арутюнян**, к.ю.н., доц. **А.А.Манасян**, к.ю.н., доц. **С.Г.Петикян**

L 657 «ԼՂՀ (Արցախի) 25-ամյա պետականության ձեռքբերումներն ու արդի մարտահրավերները» միջազգային երիտասարդական գիտաժողովի նյութերի ժողովածու – Եր.: ԱԵԳՄՄ, 2016, 320 էջ:

Ժողովածուում ներառված են «ԼՂՀ (Արցախի) 25-ամյա պետականության ձեռքբերումներն ու արդի մարտահրավերները» խորագրով միջազգային երիտասարդական գիտաժողովի նյութերը:

В сборнике включены материалы международной молодёжной научной конференции «25-летие государственности НКР (Арцаха): достижения и современные вызовы».

ՀՏԴ 94(479.25):32.001:342:06
ԳՄԴ 63.3 (5Հ)+66.0+67.400

ISBN 978-9939-1-0465-2

© Արցախի երիտասարդ գիտնականների և մասնագետների միավորում, 2016

ԱՊՐԻԼՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ. ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ

Արծրուն ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
ՀՀ պաշտպանության նախարարի
մամուլի քարտուղար, պ.գ.թ.
arcrunhovhannisyan@gmail.com

Ադրբեջանական կողմը, վերջին երկու տարվա ընթացքում կատարել էր առնվազն 180 դիվերսիոն ներթափանցման փորձ, նույն ժամանակ կիրառվող կրակային միջոցները մեծանում ու մեծանում էին: Ադրբեջանը շուրջ երկու տարի մշտական լարվածությամբ, դիվերսիաներով, ականային պայքարով և հրետանու կրակով փորձեց հայկական բանակի ուշադրությունը բթացնել: Ընտելացնելով նման լարված իրավիճակին նրանք ժամանակի հետ սկսեցին նաև որոշակի ուժերի առաջքաշումը, հետո դրանց ակտիվ խուսավարումը հյուսիսից հարավ, այս զորամիավորումից այն զորամիավորում, առաջնագիծ ու կրկին հետ: Սա հին մեթոդ է, որով դիմացինին մոլորեցնում են: Նույն ժամանակ, սակայն, ադրբեջանական ՁՈՒ-երը դիմեցին նաև ռազմարվեստի նորարարական լուծումների: Դեռևս 1990-ականների երկրորդ կեսից ռազմարվեստում կիրառվում է առկա ուժերով, առանց մեծ ուժերի ու միջոցների ներգրավման հիմնական հարված հասցնելու մարտավարությունը: Առանձին ու հատուկ կուտակումներ տեղի չեն ունենում: Օպերատիվ շարվածքում առկա ուժերով ու միջոցներով փորձ է արվում անակնկալ և որոշիչ հարված հասցնել, մարտավարական բնագիծը ճեղքելով դուրս գալ օպերատիվ խորություն:

Հատկապես կարևոր էր կենտրոնական հատվածում կուտակած զորախումբը, որը ըստ պլանի պիտի աշխատեր մարտական գործողությունների միայն երկրորդ օրվանից հետո: Այս ամենը ապացուցվեց նաև խոցված մարտական ուղղաթիռի օդաչուների մոտ առկա փաստաթղթերով[1]:

Բացի դրանից՝ ակնհայտ է մի հետաքրքիր առանձնահատկություն ևս: Ադրբեջանական լրատվամիջոցները առաջին օրը մինչև կեսօր լռում էին: Կեսօրին միանգամից անցան հարձակողական տեղեկատվական տեղատարափի, ընդ որում, սկզբում անթաքույց հպարտանալով, որ իրենք հարձակվել են և գրավել ինչ-որ բնակավայրեր ու բնագծեր: Նույն պլանի համաձայն գործում էին նաև Թուրքիայի լրատվամիջոցները: Սա նշանակում է, որ տեղեկատվական գործողությունները ևս նախօրոք պլանավորված են եղել՝ մարտական գործողություններին համահունչ սցենարով: Ադրբեջանական զորքերի հաջողությունները պետք է ուղեկցվեին համապատասխան տեղեկատվությամբ, սակայն երբ դրանք սկսեցին հաղորդվել ըստ նախնական մշակված պլանի, չէին համընկնում մարտական գործողություններին:

Հարվածների ուղղությունները ենթադրում են, որ հյուսիսից ու արևել-

[1] http://nkrmil.am/main/am/newsMore1304.html, **(23/04/16 [15:35)**

քից հասցվող հարվածները Արցախի հյուսիսում նպատակ ունեին առավելագույնը գրավելու Մարտակերտը, Սարսանգի ջրամբարով և այլն: Ըստ ՊԲ-ի հայտնած տվյալների այլ զորախմբերից բացի գործել է նաև 73-րդ հատուկ խումբը մինչև հազար զինծառայողներով[1]: Ըստ ադրբեջանական տվյալների՝ յուրաքանչյուր հատվածում գործի են դրվել 1-ին շարակազմի մեկական մոտահրաձգային բրիգադի ուժեր ու միջոցներ: Դրանք ուժեղացված են եղել հատուկ նշանակության երկու բրիգադների ուժերով[2], որոնք գործել են հիմնականում հյուսիսում: Ադրբեջանական զորքերի առաջին շարակազմում հիմնականում գործել են այս արհեստավարժ ուժերը, գրեթե չեն կիրառվել ժամկետային ծառայողներ, որոնք հավանաբար պիտի լինեին հաջողությունը զարգացնող շարակազմում:

Ամեն ուղղությամբ կենտրոնացված էին նաև կորպուսների ողջ տանկային և հրետանային ուժերը: Փաստորեն ամեն կողմից գործել է մոտ երկու բրիգադ, կորպուսի ողջ հրետանու և տանկային ուժերի հետ համատեղ: Ուղղություններին տրվել էր նաև մեկական հարվածային ուղղաթիռային էսկադրիլիա, որը ծածուկ տեղափոխվել էր մարտական գործողությունների շրջան: Այս ամենի մասին է փաստում նաև հակառակորդի կողմից հրետանային կրակի ինտենսիվությունը: Ըստ ՊԲ հրամանատար գեներալ-լեյտենանտ Լ. Մնացականյանի՝ միայն երեք օրում կիրառվել է ավելի քան 20.000 արկ, այն ժամանակ, երբ Արցախյան պատերազմի նախորդ փուլում կիրառվել է 100.000 արկ[3]:

Ադրբեջանական ԶՈՒ-ն գործելով հինգերորդ սերնդի պատերազմների տրամաբանությամբ, կիրառելով նոր օպերատիվ լուծումներ փորձել է նաև կատարել մարտավարական հնարամտության: Հարվածող խմբավորումների առաջին շարակազմում կիրառվել են միայն հատուկ նշանակության ուժեր, այդ թվում՝ փորձ՝ օդային դեսանտ իջեցնել մարտավարական խորքում: Ապրիլի 2-ի առավոտյան խոցված ուղղաթիռը հենց այս փորձի ժամանակ է խոցվել:

Այդ խմբերը խնդիր ունեին գրավել առաջին բնագծերը կամ բացվածքներ ապահովել այդ բնագծում և միաժամանակ թիկունքից հարված հասցնել գումարտակային խորությանն ու խուճապ առաջացնել: Հիմնական զրահատանկային միջոցները մոբիլ խմբերի հետ գործել են արդեն երկրորդ շարակազմում՝ փորձելով առաջին խմբերի հետ գործել բարձր ներդաշնակությամբ: Հյուսիսային ուղղությամբ ապրիլի 1-ի ուշ երեկոյան ու գիշերը դիվերսիոն խմբերը արդեն հասել են Թալիշ գյուղի հատված և

---

[1] Սամվել Բաբայանի գործողությունները համարում եմ դիվերսիա մեր հասարակության, ինքնիշխան պետության հանդեպ. Լևոն Մնացականյան; http://www.panorama.am/am/news/2016/06/06/, 06/06/2016.

[2] Вторая карабахская: боевая ничья с военно-политическими последствиями. https://eadaily.com/ru/news/2016/04/15/vtoraya-karabahskaya-boevaya-nichya-s-voenno-politicheskimi-posledstviyami. 15 апреля 2016.

[3] Սամվել Բաբայանի գործողությունները համարում եմ դիվերսիա մեր հասարակության, ինքնիշխան պետության հանդեպ. Լևոն Մնացականյան; http://www.panorama.am/am/news/2016/06/06/, 06/06/2016.

բարձունքներում դիրքավորվելով ապահովել են հրետանու կրակը, որն էլ իր հերթին համապատասխան պահին փորձել է արգելափակել ՊԲ-ի գումարտակների առաջխաղացումը: Այլ խմբեր փորձել են կատարել նույնը ճանապարհների վրա ծուղակներ պատրաստելով: Առաջին իսկ հարվածների անակնկալությամբ և սրընթացությամբ ադրբեջանական հատուկ ստորաբաժանումներին հաջողվել է գրեթե գրավել Թալիշ գյուղը և ապահովել մոտակա գումարտակների արգելափակումը:

Ադրբեջանական զորքերը նոր ուժերի ու միջոցների ներգրավումը իրականացրել են ընթացքում՝ մարտավարական խորությունում ունենալով պահեստային ուժեր: Մեծ ուժեր այս ընթացքում խորքից առաջ չի տեղափոխվել, առավելագույնը առանձին գումարտակներ, մաս-մաս և ուղղաթիռներ: Մեծ ուժերի շարժը սկսվել է միայն արդեն պատերազմի օրը:

Որոշ խմբերի անմիջապես սկզբից հաջողվում է ներթափանցել ու դարանակալել հայկական ստորաբաժանումների և բնակավայրերի ենթակառուցվածքների մոտ:

Ոգևորվելով այս խմբերի հաջողություններով, այլ խմբերը սկսել են անմիջապես կարևոր դիրքերի վրա գրոհը և նույնիսկ որոշ տեղերում ականազերծման աշխատանքները տանկային ստորաբաժանումների անցումները ապահովելու համար: Առաջնագծին հրետանային կրակի տակ մոտեցել են ականազերծող մեքենաները և սկսել են անցուղիներ բացել տանկերի համար: Սեյսուլանի ուղղությամբ է օրինակ գերակշիռ ուժերի կրակի տակ ընկել վաշտի հրամանատար կապիտան Արմենակ Ուրֆանյանը իր վաշտի մի ջոկով:

Սակայն հենց առաջին ժամից ադրբեջանական պլանները սկսել են շեղվել:

- Թալիշում հայկական հատուկ նշանակության փոքր ջոկատին, որը պլանային դետքային գործողություն էր կատարում տեղանքում, հանկարծակի մարտի բռնվելով հակառակորդի հատուկ նշանակության ստորաբաժանումների հետ հաջողվում է հետ շպրտել ադրբեջանական ջոկատներին գյուղի դիրքերից, նրանց փախուստի մատնում և անգամ հետապնդելով մի քանիսին ոչնչացնել:
- Անգամ մի քանի անգամ գերակշռող ուժերով ադրբեջանական հատուկ նշանակության որոշ ջոկատների չի հաջողվել գրավել նախանշված բոլոր դիրքերը, հատկապես բարձունքների դիրքերը:
- Հատուկ նշանակության ջոկատների և տանկային ուժերի համագործակցությունը սկսում է խափանվել, որը ողջ ռազմագործողության սինխրոնիզացիան խափանում է:
- Հայկական ստորաբաժանումների հիմնականում գումարտակային հրետանին ոչ միայն ամբողջովին չի ճնշվում, այլ նաև սկսում է իր դիպուկ կրակով զգալիորեն խանգարել ադրբեջանական ստորաբաժանումների գործողություններին:

Այսինքն չի իրականացվում գլխավորը՝ հիմնական հարվածային ուժերի ճանապարհը չի բացվում, ինչպես պլանավորած էր: Ավելին արդեն մի քանի ժամից պլանները ավելի են խափանվում, երբ հայկական

ստորաբաժանումներից շատերին հաջողվում է նույնիսկ գումարտակային պահեստային ուժերով հակագրոհներ իրականացնել: Հատկապես արագ իր բոլոր կորցրած դիրքերը հետ է վերցրել 5-րդ ՊԾ-ը[1]:

Արդեն ապրիլի 2-ի ցերեկը հակառակորդը սպառելով իր գրոհող խմբերի առաջին շարակազմի հիմնական ուժերը և կորցնելով անակնկալության տարրը, ևս մեկ անգամ փորձել է գրոհը զարգացնել նոր ուժեր մարտի մեջ նետելով, սակայն նույնիսկ կորցրել է իր գրաված որոշ դիրքերը: Երկու ուղղություններում էլ հայկական ուժերը կիրառելով տանկեր ու հրետանի անցել են հակահարձակման:

Հայկական ստորաբաժանումներին հանկարծակիի բերել չկարողանալով՝ հակառակորդը դիմել է ծայրահեղ մեթոդի, այսպես ասած, պլան «Բ»-ի՝ հրետանային ինտենսիվ կրակով, մարտական ԱԹՍ-ներ և այլն օգտագործելով, գոնե առաջին դիրքերը վերցնելու մարտավարությանը: Իհարկե, նման ինտենսիվ կրակով մի քանի տեղում հակառակորդին հաջողվել է ճեղքել առաջին բնագիծը, սակայն դրանով էլ տապալել է ամբողջ օպերացիան. քանի որ հիմնական ուժերը ոչ մի նշանակալի հաջողության չհասնելով, անգամ մարտավարական որևէ խորություն չգրավելով, ստիպված են եղել դիրքային մարտեր վարել: Անգամ այս միջոցների կիրառմամբ հակառակորդին չի հաջողվել ավարտել ճեղքման գործը և նույնիսկ գրավված առանձին դիրքերում ամրանալ:

Հարավային ուղղությամբ Պաշտպանության բանակի ստորաբաժանումների կողմից ապրիլի 2-ին ժամը 12:30-ի սահմաններում խոցվել են հակառակորդի մեկ ռազմական ուղղաթիռ և 2 տանկ: Նույն ժամանակ հյուսիսային հատվածում էլ արդեն խոցվել էին մի քանի ԱԹՍ-ներ:

Ապրիլի 3-4-ին ադրբեջանական ԶՈՒ-երը մարտական ԱԹՍ-ների կիրառությամբ փորձեցին հաջողության հասնել, հատկապես հոգեբանական ազդեցություն թողնելով: Սակայն իրականում մի քանի տասնյակ կիրառության դեպքերից միայն երկու-երեք դեպքերում էր նրանց հաջողվել նման ԱԹՍ-ով հարված հասցնել համեմատաբար կարևոր թիրախներին: Մնացած դեպքերում հարվածները ապարդյուն էին եղել, քանի որ հարվածները հասցվել էին հայկական կողմի պատրաստած կեղծ թիրախներին:

Ադրբեջանական ԶՈՒ-երը ապրիլի 3-4-ին նոր ուժեր ու միջոցներ են նետել մարտի, սակայն կրկին անհաջողության մատնվել: Հատկապես ուշագրավ է կենտրոնական հատվածի ուժերի կուտակումը: Ապրիլի 2-ից սկսած ադրբեջանական ԶՈՒ-երի զորամիավորումները սկսում են նոր կուտակումներ ու վերախմբավորումներ կատարել, մասնավորապես մարտական գործողությունների շրջան են բերվում երեք հրետանային բրիգադներ և մեծ համազորային այլ ուժեր: Կենտրոնական ճակատի ուղղությամբ տանկային գումարտակին հավասար ուժերը ամբողջ օրը խուսափարումներ են կատարում և կրակային դիրքերում երկար չմնալով դիրքե-

[1] ԼՂՀ ՊԲ-ի կողմից հրապարակվեց համապատասխան տեսանյութ, որտեղ Սեյսուլանի ուղղությամբ հստակ երևում էին հակառակորդի զոհերը անմիջապես հայկական դիրքերի ուղղությամբ, այդ թվում նաև խոցված տանկը:

ը փոխում: Ապրիլի 4-ին այդ կուտակումները հասնում են իրենց գագաթնակետին: Ռազմաճակատի կենտրոնական հատվածում արդեն կեսօրին ադրբեջանական ԶՈՒ-երը կենտրոնացրել էին երկու լրացուցիչ համազորային բրիգադների ուժեր և միջոցներ, չհաշված նախորդ օրերի կուտակումները: Ժամը 18:00 սահմաններում ԼՂՀ ՊԲ-ի կենտրոնական ենթակայության հրետանային բրիգադը մեկ ռեակտիվ դիվիզիոնի և մեկ հեռահար հրանոթային դիվիզիոնի ուժերով համազարկային կրակ է բացում հակառակորդի այդ կուտակումների վրա: Ընդհանուր համատեղված համազարկով՝ արկերի ընդհանուր ծախսը մոտ 500 արկ, դիվիզիոնին հաջողվում է ճնշել վերը նշված կուտակված բրիգադների ուժերին և ոչնչացնել բրիգադի հրամանատարական կետը: Ըստ որոշ տվյալների մի քանի ժամվա տարբերությամբ զոհվում են ադրբեջանական բրիգադի հրամանատարը և ԾՊ-ը: Նույն ժամանակ ժամը 18:55-ի սահմաններում բրիգադի հետախուզական միջոցները արձանագրում են հեռավոր, համար 712 նշանակետը, որը հանդիսանում է հեռահար հրթիռային համազարկային կայան, որը երկու հրթիռ է արձակել դեպի Արցախի կենտրոնական պաշտպանական բնագծերը: Բրիգադի հրանոթներից մեկը անմիջապես կրակ է արձակում հակառակորդի նշանակետի ուղղությամբ, ուղղորդումներ մտցնելով ևս երկու արկ է արձակվում, որից հետո ադրբեջանական կայանը անմիջապես լքում է կրակային դիրքը: Կենտրոնացման շրջանում երկու բրիգադին մոտ ուժերը ընկնելով այդ կրակի տակ ուղղակի կորցնում են մարտունակությունը: Այդ երեկոյան Ադրբեջանի պաշտպանության նախարարը ջղաձգված հայտարարություն կատարեց այն մասին, որ նրանք կարող են հարված հասցնել Ստեփանակերտին[1]: Նույն օրը սակայն Մոսկվայից ստացվում էին առաջարկներ, ըստ որոնց ադրբեջանական կողմը դիմում է զինադադարի համար: Սա արդեն հստակ վկայությունն էր այն բանի, որ ողջ ռազմագործողությունը տապալված է, իսկ հիմնական զորախմբերը ծանր կորուստներ են կրել: Դրան հետևեց հայկական կողմի չոր պատասխանը[2]: Նույն օրը «Սմերչ» կայանները վեց հրթիռ են արձակել Արցախյան հարավային հատվածի հրետանային գնդերից մեկի մարտական դիրքերի ուղղությամբ, որի արդյունքում, եղել են չորս վիրավոր և որոշակի վերականգնվող վնասներ է կրել մարտական տեխնիկան, սակայն զոհեր չեն եղել:

Հրետանային բրիգադը երկրորդ անգամ կիրառվել է ապրիլի 27-ի լույս 28-ի գիշերը և կրկին փոքր համազարկով գերազանց է կատարել իր մարտական խնդիրը:

Արցախի հարավային հատվածում ադրբեջանական ԶՈՒ-երը կիրառել են նաև «Т-90С» տանկերի վաշտ, որը առաջին իսկ օրվանից ակտիվ կիրառվել է մարտական գործողություններում: Ապրիլի 2-3-ին այս ստորաբաժանումը ակտիվորեն կիրառվել է ինչպես ամբողջական կազմով,

---

[1] Боевые действия в Карабахе. 4.04.2016. https://www.meydan.tv/ru/site/news/13274/

[2] (04/04/16 [21:40]) Հաղորդագրություն (Թարմացված). http://nkrmil.am/main/am/newsMore1254.html

այնպես էլ առանձին տանկեր ու դասակներ: Հայկական հակատանկային միջոցները այս տանկերի դեմ պայքարը վարել են առաջին իսկ րոպեից և ապրիլի 4-ին հստակ արձանագրվել է մեկ տանկի խոցում ևս երկուսը հավանական խոցում է գրանցվել: Դրանով փաստորեն կոտրվեց այն միֆը թե այս տանկին խոցել հնարավոր չէ հին հակատանկային հրթիռային համալիրներով:

Ապրիլի 5-ին ըստ էության սպառելով թևերում հաջողություն հասնելու բոլոր հնարավորությունները և կենտրոնում տապալելով հիմնական հարված հասցնելու նախապատրաստությունները ադրբեջանական կողմը սկսեց ինտենսիվորեն դիմել զինադադարի կնքման համար:

Կրակի դադարեցման պայմանավորվածության պահի դրությամբ ադրբեջանական կողմը կորցրել էր 24 տանկ, 1 ՀՄՄ, 6 զրահապատ մեքենա, 1 ինժեներական մեքենա, 1 «Գրադ» ՀԿՌՀ, 2 ուղղաթիռ և 12 անօդաչու թռչող սարք[1]: Հատուկ նշենք, որ հայկական կողմը կորցրել է մեկ ԱԹՍ:

Չորսօրյա մարտական գործողությունները փաստեցին, որ ադրբեջանական ՁՈՒ-ն, բրիգադային ուժեղացված զորախմբերով, ներառյալ՝ վերադասի կողմից տրված ուժերն ու միջոցները, հարձակում ձեռնարկելով ըստ էության վաշտային հենակետի վրա՝ հընթացս չի կարողացել գրավել այն, անգամ դուրս չի եկել վաշտի պաշտպանության հենակետի ամբողջ խորքը: Ադրբեջանական զորախմբերը մարտական գործողությունների երկրորդ օրը կիրառել են օպերատիվ ենթակայության ուժեր: Ծանր հրանետները, մարտական ԱԹՍ-ները և «Սմերչ» համակարգերը անգամ բրիգադի վերադասի ենթակայության ներքո չեն, այսինքն՝ կիրառվել են երկու-երեք աստիճան բարձր հրամանատարության կողմից տրված ուժեր և միջոցներ:

Այս ամենը ըստ էության հիբրիդային պատերազմ էր, հյուծման նպատակներով, քանի որ շեշտը դրվում էր միայն կրակային ներգործության, հետախուզության և ՌԷՊ-ի վրա: Հիմնական գործողությունները վարվում էին գիշերը, ցերեկը համեմատական լռություն է, կատարվում էին հետախուզություն, ակտիվ խուսավարումներ ու համալրումներ: Մասնավորապես ապրիլի վերջին օրերին ադրբեջանական հրետանին հարվածներ հասցրեց արցախյան հյուսիսային բնակավայրերին, կիրառելով մի քանի հարյուր հրետանային արկ: Դրանից հետո ստացավ հուժկու հակահարված մոտակա բնակավայրերին, որոնց շրջանում թաքցնում էին հրետանային մարտկոցները: Սպառելով նաև այս գործողություններում որոշակի հաջողության հասնելու հույսերը ադրբեջանական բանակը դիմեց արդեն ավանդական դարձած մարտավարությանը՝ ժամանակավոր հանգիստ հաջորդ փուլի նախապատրաստման համար: Հյուծման պատերազմը, որը շարունակվում է առաջին փուլից հետո կնքված հրադադարից հետո, ըստ էության իրականացվում է միայն այս ռազմավարությամբ՝ փուլային գործողություններ ու նախապատրաստություններ, որոնց մենք լռություն ենք անվանում:

[1] http://www.1in.am/1883791.html:

Արծրուն Հովհաննիսյան

ԱՊՐԻԼՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ. ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ

Բանալի բառեր՝ *Ապրիլյան պատերազմ, Արցախի Հանրապետություն, Ադրբեջան, Պաշտպանության բանակ, բլիցկրիգ, անօդաչու թռչող սարք, տանկ, հրետանի, հարձակում, պաշտպանություն*

Ապրիլյան պատերազմի դրդապատճառների քաղաքական ասպեկտները տևական ժամանակ դեռ կքննարկվեն, անշուշտ, առաջ կքաշվեն բազում աշխարհաքաղաքական, տնտեսական և այլ դրդապատճառներ: Սակայն փաստն այն է, որ Ադրբեջանը իր հարձակումից առաջ մի քանի հանգամանք հստակորեն հաշվարկել էր: Անցած տարիների ընթացքում Ադրբեջանը ձեռք էր բերել մեծաքանակ նորագույն զինատեսակներ, դրանք իրենց մեծ վստահություն էին ներշնչել, ընդհուպ, որ դրանք կարող են իրենց հաղթանակ ապահովել: Միաժամանակ նրանք գիտեին, որ հայկական կողմը ևս բավականին ձեռքբերումներ ունի, սակայն դրանց զգալի մասը դեռևս ճանապարհին է: Եթե սրան հավելենք, որ ադրբեջանական բանակի ծախսերը շեշտակիորեն կրճատվել էին, ապա կարելի է ենթադրել, որ, ըստ իրավիճակի, ճիշտ ժամանակն է փորձել բլիցկրիգ (արագ պատերազմ) անել:

Արцրուն Ովաննիսյան

АПРЕЛЬСКАЯ ВОЙНА. КРАТКИЙ ОЧЕРК

Ключевые слова: *Апрельская война, Республика Арцах, Армия Обороны, блицкриг, беспилотный летательный аппарат, танк, артиллерия, нападение, оборона*

Для многих из нас апрельская четырехдневная война стала неожиданностью. Но если углубиться и проанализировать предыдущие действия Азербайджана, то станет очевидно, что война было внезапной только с первого взгляда. Все было хорошо продумано и спланировано заранее. В этом кратком обзоре я попытался подчеркнуть довоенные действия Азербайджана, направленные на поддержание напряженности армянской стороны и притупление ее внимания. Кроме того описаны процессы, которые имели свое влияние на начало войны, а также подробное описание повседневных военных действий, вооружения и военной техники, использованных во время войны. В этом обзоре я также представил, как армянам удалось успешно противостоять блицкригу азербайджанской стороны без какой-либо специальной подготовки. Причины выхода из строя вооруженных сил Азербайджана также включены в обзор.

Artsrun Hovhannisyan

APRIL WAR: BRIEF REVIEW

Key Words: *April war, Artsakh Republic, Defence Army, blizkrieg, unmanned aerial vehicle, panzer, artillery, offence, defence*

For many of us the four-day war in April was an unexpected military action. But if go deep and examine previous actions of Azerbaijan, it will become obvious that it was sudden only from the first sight, cause everything was well thought and planned. In this brief review I have tried to underline the prewar actions of Azerbaijan that aimed to keep Armenia in tension and abate Armenians' attention. Besides I have pointed out other conditions that had their impact for starting a war. There is also detailed description of day to day military actions, weapons and military technique, used during the war. In this review I have also represented how Armenians managed to successfully resist Azerbaijani blizkrieg without any special preparation. The reasons of failure of Azerbaijani armed forces are also included in the review.